



With funding from:
Austrian
Development
Cooperation



«Միասին հանուն սոցիալական համայնքների -
Ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ ի նպաստ Հայաստանում
ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների»

Ծրագիր

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ուղեցույց Ենթադրամաշնորհային ծրագրի
Դիմորդների համար

Բյուջեի տող՝ 21.020801

Պայմանագրի համար: EuropeAid/168333/DD/ACT/AM

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝

29 օգոստոսի, 2022 թ., 15:00 տեղական ժամանակով



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	3
1.1.	Ներածություն	3
1.2.	Ենթադրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակներն ու առաջնահերթությունները...	4
2.	ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	6
2.1.	Դռնորի կողմից տրամադրվող ֆինանսական հատկացումներ	6
2.2.	Հայտատուների համապատասխանությունը	6
2.2.1.	Հայտատու	6
2.2.2.	Հայտերի քանակը և մեկ հայտատուի հաշվարկով դրամաշնորհները	7
2.3.	Թույլատրելի ծրագրային առաջարկներ	8
2.3.1.	Ի՞նչ է ծրագիրը	8
2.3.2.	Տևողությունը	8
2.3.3.	Ծրագրի աշխարհագրական ծածկույթը	8
2.3.4.	Ոլորտներ կամ թեմաներ	8
2.3.5.	Ենթադրամաշնորհի շրջանակներում ընդունելի գործողություններ	10
2.4.	Տեսանելիության ապահովում	13
2.5.	Թույլատրելի ծախսեր	13
2.5.1.	Թույլատրելի ծախսեր	13
3.	ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	14
3.1.	Հայտի բովանդակությունը/ Հայտի փաթեթը	14
3.2.	Ու՞ր և ինչպե՞ս ուղարկել Հայտերը.	16
3.3.	Հայտերի ներկայացման վերջնաժամկետը	17
4.	ՓՈՔԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ	17
4.2.	ՔԱՅԼ 2: Հայտերի տեխնիկական և ֆինանսական գնահատում	18
4.3.	ՔԱՅԼ 3: Հայտատուների ծանուցումը	21
4.4.	ՔԱՅԼ 4: Ամփոփում և Ենթադրամաշնորհային պայմանագրերի կնքում	22
5.	ԴՈՆՈՐԻ՝ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՁՈՐԴՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ	22
5.1.	Հաշվետվողականություն և վճարման պայմաններ	22
5.2.	Մոնիթորինգ և գնահատում	23
5.3.	Աուդիտ	24
6.	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽՁՈՒՄԸ	24
6.1.	Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը կամ կասեցումը	24
6.2.	Ենթադրամաշնորհային ծրագրի ավարտը	24
7.	ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	25
8.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ	25



With funding from:
Austrian
Development
Cooperation



1. ՆԱԽԱԴՐՑԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1. Ներածություն

2021 թվականին Հայաստանի յուրաքանչյուր երրորդ քաղաքացին համարվում էր աղքատ: Այդուհանդերձ, գոյություն ունեցող սոցիալական ծառայություններն ու սոցիալական աջակցության ձևերը (հիմնականում՝ դրամական) ոչ միշտ էին մատուցվում պատշաճ կերպով կամ հաջողում թիրախավորել առավել խոցելի և աղքատ ընտանիքների իրական կարիքները: Վերջինս, հատկապես ակնհայտ դարձավ վերջին երկու տարվա ընթացքում Հայաստանում տեղի ունեցած խոշոր ճգնաժամերի ընթացքում (COVID-19, Արցախյան պատերազմ): Այս ճգնաժամերը ցույց տվեցին, տեղական սոցիալական ծրագրերը ցածր դիմակայունություն ու կարողություն ունեն արձագանքելու աղքատ և խոցելի բնակչության կարիքներին արտակարգ իրավիճակների պայմաններում:

Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը, որը ՀՀ-ում ներդրվել է դեռևս 2017 թվականին, աղքատության հաղթահարման իր համալիր մոտեցմամբ, կարող է վերը նշված սահմանափակումները մեղմող և անհատների ու համայնքների զարգացմանը նպաստող կարևոր գործիք լինել՝ ապահովելով սերտ համագործակցություն տեղական բոլոր դերակատարների միջև, և ամենաաղքատներին կապելով գործող ծառայություններին և ծրագրերին: Մա հատկապես նշանակալի է, նկատի ունենալով, որ ՀՀ կառավարությունը տարեց տարի էլ ավելի է կարևորում սոցիալական աշխատանքի դերը աղքատության հաղթահարման գործում, ինչը արտացոլված է նաև ՀՀ կառավարության 2017-22 թթ. հնգամյա ծրագրում:

Այսպիսով, սոցիալական ծառայությունների մատչելիության բարձրացումը, ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը, ինչպես նաև սոցիալական ծառայությունների մատուցման պատվիրակումը ՔՀԿ-ներին համարվում են աղքատության հաղթահարման կարևոր միջոցներ: Միաժամանակ, չնայած ՀՀ օրենքը «Սոցիալական աջակցության մասին», ինչպես նաև ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» ձևավորել են անհրաժեշտ իրավական նախադրյալներ՝ թիրախավորված տեղական սոցիալական պլանների մշակման և իրականացման համար (օրինակ՝ Հնգամյա համայնքային զարգացման ծրագրերում և Տարեկան աշխատանքային պլաններում սոցիալական պաշտպանության բաղադրիչի ներառումը, խոցելի բնակչության կարիքների գնահատումը, սոցիալական ոլորտի և միջոլորտային համագործակցության կարևորումը և այլն), այնուամենայնիվ, դեռևս համայնքները բավարար ռեսուրսներ և հնարավորություններ չունեն մշակելու և ներդնելու կարիքահեն և համալիր տեղական սոցիալական պլաններ:

Այս համատեքստում, **«Միասին հանուն սոցիալական համայնքների. ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների»** ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության կողմից և իրականացվում է Հիլֆսվերկ Ինթերնեյշնլի (HWI) կողմից՝ երեք տեղական գործընկերների՝ Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի (ՀՍԱԱ), Գործընկերություն և ուսուցում ՀԿ-ի (ԳՈԻՄ) և «Ընտանիք և համայնք» ՀԿ-ի (ԸՀ), հետ համատեղ, **նպատակ** ունի պայքարել



With funding from:
Austrian
Development
Cooperation



աղքատության և անհավասարության դեմ Հայաստանում՝ սոցիալական ոլորտի շահագրգիռ կողմերի (պետական և ոչ պետական) մասնակցությամբ մշակելով կարիքահեն և կայուն տեղական սոցիալական պլաններ, ինչպես նաև ներդնելով՝ համայնքահեն և ՔՀԿ առաջնորդությամբ իրականացվող սոցիալական ծառայություններ՝ ի շահ աղքատ և խոցելի բնակչության ՀՀ Շիրակի, Տավուշի, Արմավիրի և Սյունիքի մարզերում:

Ծրագրի շրջանակներում, վերը նշված մարզերի ինը համայնքներում արդեն իսկ մշակվել են տեղական սոցիալական պլաններ (ՏՄՊ), որոնք համադրվել են համայնքների Տարեկան աշխատանքային պլանների և Հնգամյա զարգացման ծրագրերի հետ: Ավելին, համայնքների մեծ մասում նշված ՏՄՊ-ները արդեն իսկ հաստատվել են համայնքների ավագանիների կողմից: Յուրաքանչյուր ՏՄՊ մշակվել է Ծրագրային թիմի և տեղական գործընկերների կողմից համատեղ իրականացված կարիքների համալիր գնահատման, ինչպես նաև համայնքում խոցելի բնակչության, տեղական իշխանությունների և Ավագանու անդամների հետ խորհրդակցությունների և քննարկումների արդյունքների հիման վրա: Այս գործընթացում ակտիվ ներգրավում ունեցող համայնքային կառույցներն ու համայնքի ակտիվ անդամները նաև ընդգրկվել են համայնքային միջոլորտային ցանցերում, որոնք նույնպես ձևավորվել են սույն Ծրագրի շրջանակներում:

Այս համատեքստում, տեղական ՀԿ-ները հրավիրվում են ներկայացնելու աղքատ, խոցելի և մարզինալացված, այդ թվում պետական և ոչ պետական սոցիալական աջակցության ծառայություններից դուրս մնացած, սոցիալական խմբերի սոցիալական հիմնախնդիրներին արձագանքող սոցիալական ծառայությունների ներդրման, փորձարկման, ընդլայնման և/կամ բարելավմանն ուղղված հայտեր՝ հիմք ընդունելով թիրախ համայնքների կողմից որպես առաջնահերթություն սահմանված ոլորտները:

Ենթադրամաշնորհի շրջանակներում, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան (ՀՄԱԱ)՝ որպես սոցիալական աշխատանքի ոլորտում կոմպետենտության կենտրոն ստանձնում է առանցքային դեր՝ հզորացնելու և ամրապնդելու տեղական կազմակերպությունների կարողությունները սոցիալական ծառայությունների տրամադրման ոլորտում (վերապատրաստումների և խորհրդատվությունների միջոցներով): Միաժամանակ, ՀՄԱԱ-ն հանդես է գալիս՝ որպես Պայմանագրի կողմ (դոնոր), որը դրամաշնորհներ է տրամադրելու տեղական ՔՀԿ-ներին և սոցիալական ծառայություններ մատուցողներին:

1.2. Ենթադրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակներն ու առաջնահերթությունները

Ենթադրամաշնորհային ծրագրի մրցույթի նպատակն է նպաստել Հայաստանում աղքատ և խոցելի խմբերի սոցիալական պաշտպանությանն ու սոցիալական փոփոխություններ բերել Հայաստանի համայնքներում՝ զարգացնելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ աղքատ և խոցելի բնակչության սոցիալական կարիքներին արձագանքելու կարողությունները: Ծրագիրն իրականացվում է **Շիրակի, Տավուշի, Արմավիրի և Սյունիքի մարզերում:**

Ենթադրամաշնորհային ծրագրի **հիմնական նպատակները** ներառում են.



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



- Փորձարկել, ընդլայնել և/կամ բարելավվել՝ բնակչության աղքատ, խոցելի և մարզինալացված, այդ թվում պետական կամ ոչ պետական սոցիալական աջակցության ծրագրերից դուրս մնացած, խմբերին տրամադրվող համայնքահեն սոցիալական ծառայությունները,
- Նպաստել ՔՀԿ-ների դերի ամրապնդմանը սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտներում (համայնքային և տարածաշրջանային մակարդակներում)՝ միջոլորտային համագործակցության զարգացման միջոցով,
- Բարելավվել համապատասխան շահագրգիռ կողմերի իրազեկվածությունն ու ընդլայնել նրանց մասնակցությունը աղքատության և անհավասարության հաղթահարմանն ուղղված համայնքահեն սոցիալական ծրագրերի մշակման, առաջադրման, մոնիթորինգի և դրանց կայունության ապահովման գործընթացներում,
- Խթանել սոցիալական պաշտպանության համակարգի դրական իմիջն ու նպաստել համակարգի նկատմամբ վստահության մեծացմանը:

Ենթադրամաշնորհային ծրագրի **ակնկալվող արդյունքներն** են.

- Ծրագրի թիրախ մարզերի ինը համայնքներում (*Շիրակ (Ախուրյան, Գյումրի), Տավուշ (Իջևան, Նոյեմբերյան), Արմավիր (Արմավիր, Մեծամոր) և Սյունիք (Գորիս, Տաթև, Միսիան)*) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ներդրվել, փորձարկվել, ընդլայնվել և/ կամ բարելավվել են համայնքահեն սոցիալական ծառայություններ (մեկ կամ բազմաբաղադրիչ), որոնք համապատասխանում են սոցիալական ծառայությունների տրամադրման նվազագույն սկզբունքների պահանջներին և թիրախ համայնքի տեղական սոցիալական պլանով առաջնահերթ համարվող սոցիալական ծրագրի պայմաններին: Տեղական սոցիալական պլանները հասանելի են [ՀՄԱԱ վեբկայքում](#):
- Ենթադրամաշնորհային ծրագրի ավարտին ֆինանսավորված ծրագրերի առնվազն 50%-ը շարունակում է ֆինանսավորվել պետական միջոցներով:
- Ենթադրամաշնորհային ծրագրերի շրջանակներում սոցիալական ծառայություններ ստացած շահառուները մեծամասամբ բավարարված են տրամադրված ծառայություններից:
- Ֆինանսավորում ստացած սոցիալական ծառայությունները արդյունավետ կերպով ներկառուցված են տեղական սոցիալական ցանցում և ակտիվորեն համագործակցում են բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում պետական և համայնքային սոցիալական աշխատողների, պետական կառույցների և այլ ՔՀԿ-ների հետ,
- Բոլոր ֆինանսավորված ծառայություններում ներդրված է և առօրյա գործառնության շրջանակներում արդյունավետորեն կիրառվում է սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը:
- Տեղական ՔՀԿ-ները ներգրավված են քաղաքականության մշակման և երկխոսության գործընթացներում և ունեն դիտորդական և վերահսկողական բարելավված կարողություններ:



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



2. ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

2.1. Դոնորի կողմից տրամադրվող ֆինանսական հատկացումներ

Մույն դրամաշնորհների մրցույթի ընդհանուր նպատակային բյուջեն կազմում է 171.000 եվրո: Դոնորն իրավասու է սույն մրցույթի շրջանակներում չտրամադրել հասանելի ամբողջ գումարը:

Դրամաշնորհների արժեքը.

Մույն դրամաշնորհների մրցույթի շրջանակներում ներկայացվող հայտի բյուջեի առավելագույն և նվազագույն արժեքը պետք է լինի հետևյալ միջակայքում՝

- Նվազագույն արժեք՝ 17,500 եվրո,
- Առավելագույն արժեք՝ 19,000 եվրո:

Լրացուցիչ ֆոնդեր (համաֆինանսավորում).

Հայտատուների կամ համայնքների կողմից ծրագրված աշխատանքներին ներդրումներ կատարելը (կանխիկ, ապրանքի կամ ծառայությունների տեսքով) խրախուսվում է, սակայն պարտադիր չէ: Համապատասխան և ստուգելի ներդրումները կդիտարկվեն որպես առավելություն՝ դրամաշնորհային հայտերի գնահատման ընթացքում (տե՛ս սույն Ուղեցույցի 4.2 կետը):

Ոչ կանխիկ ներդրումները ներառում են ապրանքների կամ ծառայությունների (ապրանքներ, սարքավորումներ, տարածքներ՝ (սեփական կամ վարձակալական հիմունքներով աշխատանք, (իր կամ այլ աշխատակիցների՝ կամավորական սկզբունքով) և այլն) անվճար տրամադրում ենթադրամաշնորհային ծրագրի շահառուներին: Եթե ենթադրամաշնորհային ծրագրի շահառուի կողմից առաջարկված ներդրումը համաֆինանսավորում է, ապա այն պետք է չգերազանցի.

- ա) այն ծախսերը, որոնք իրականացվել են և պատշաճ կերպով հաստատվում են հաշվապահական փաստաթղթերով,
- բ) այն ծախսերը, որոնք ընդհանուր առմամբ ընդունելի են համապատասխան գնային շուկայում:

2.2. Հայտատուների համապատասխանությունը.

Համապատասխանող հայտատուները պետք է դիմեն միանձնյա (առանց գործընկերոջ):

Ենթադրամաշնորհային ծրագրի ֆոնդը հավասար պայմաններով բաց է բոլոր այն սուբյեկտների համար, որոնք համապատասխանում են ներքոնշյալ բոլոր չափանիշներին:

2.2.1. **Հայտատուն.**

Դրամաշնորհային մրցույթին իրավասություն ունի դիմելու այն հայտատուն, որը.

- գրանցված է որպես իրավաբանական անձ,
- շահույթ չհետապնդող կազմակերպություն է և



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



- քաղաքացիական հասարակության կազմակերպություն է՝ ոչ պետական է, շահույթ չհետապնդող է, անկախ հիմնադրամ է, համայնքահեն կազմակերպություն է, որը
- գրանցված է Հայաստանում, որպես տեղական կազմակերպություն (նախապատվությունը կտրվի այն կազմակերպություններին, որոնք գրանցված են Ծրագրի թիրախ մարզերից որևէ մեկում՝ Արմավիր, Շիրակ, Սյունիք, Տավուշ),
- վերջին 5 տարիների ընթացքում ունի առնվազն 2 ծրագրերի իրականացման ապացուցելի փորձառություն Հայաստանում, որոնցից յուրաքանչյուրի բյուջեն գերազանցում է 6000 եվրոն և, որոնցից առնվազն մեկն ուղղակիորեն առնչվում է սոցիալական ծառայությունների տրամադրմանը (ծառայություններ տարեցների, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց կամ այլ խոցելի խմբերի համար), և որոնցից առնվազն մեկն իրականացվել է Ծրագրի թիրախ համայնքներից/մարզերից որևէ մեկում:
- ունի իրավաբանական պայմանագրի կողմ լինելու իրավասություն (իրավունակ է կնքելու պայմանագիր) և
- անմիջական պատասխանատվություն է կրում Դրամաշնորհային ծրագրի մշակման, նախապատրաստման և իրականացման համար:

Մայրաքաղաքից դուրս գտնվող շրջաններում գործող փոքր ՔՀԿ-ների, ինչպես նաև կանանց և/կամ երիտասարդների կողմից ղեկավարվող ՔՀԿ-ների մասնակցությունը սույն Դրամաշնորհային մրցույթին խրախուսվում է:

Պոտենցիալ հայտատուները **չեն կարող մասնակցել/դիմել** սույն Դրամաշնորհային մրցույթին, ինչպես նաև ստանալ դրամաշնորհի հետևյալ դեպքերում.

- Հայտատուն գտնվում է ծրագրի իրականացմանը էապես խանգարող իրավական վեճի մեջ կամ ունի պարտքեր, որոնք կարող են բացասական նյութական ազդեցություն ունենալ կազմակերպության ինստիտուցիոնալ կարողության վրա:
- Հայտատուն ներգրավված է եղել խարդախության կամ այլ կոռուպցիոն գործարքների մեջ:
- Հայտատու կազմակերպությունը գտնվում է լուծարման գործընթացում:
- Հայտատու կազմակերպությունը գործում է քաղաքական կամ կուսակցական շահերի հիման վրա:

2.2.2. Հայտերի քանակը և մեկ հայտատուի հաշվարկով դրամաշնորհները

Սույն դրամաշնորհային մրցույթի շրջանակներում մեկ հայտատուն չի կարող ներկայացնել ավելի քան 4 հայտ, ընդ որում, յուրաքանչյուր մարզի համար ներկայացվող հայտերի առավելագույնը քանակը մեկն է:

Սույն դրամաշնորհային մրցույթի շրջանակներում Հայտատուին չի կարող շնորհվել ավելի քան երկու դրամաշնորհ:



With funding from:
Austrian
Development
Cooperation



2.3. Թույլատրելի ծրագրային առաջարկներ.

2.3.1. Ի՞նչ է ծրագիրը.

Ծրագիրը մի շարք գործողությունների տրամաբանական շարքն է:

2.3.2. Տևողությունը.

Ծրագրի պլանավորված տևողությունը պետք է լինի 8-12 ամսվա միջակայքում:

Փոքր դրամաշնորհային ծրագրերը կարող են իրականացվել միայն «Միասին հանուն սոցիալական համայնքների» ծրագրի իրականացման ընթացքում, այն է՝ մինչև 31.01.2024 թ.: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսավորումը կարող է իրականացվել միայն Դոնորի և հաղթող հայտատուի միջև դրամաշնորհային պայմանագրի ստորագրման օրվանից հետո:

2.3.3. Ծրագրի աշխարհագրական ծածկույթը

Ծրագրերը պետք է իրականացվեն Հայաստանի չորսը մարզերից որևէ մեկում, ընդ որում, նշված մարզերի հետևյալ խոշորացված համայնքներից որևէ մեկում.

- Շիրակի մարզ (Ախուրյան և/կամ Գյումրի համայնք)
- Տավուշի մարզ (Իջևան և/կամ Նոյեմբերյան համայնք)
- Արմավիրի մարզ (Արմավիր և/կամ Մեծամոր համայնք)
- Սյունիքի մարզ (Գորիս և/կամ Սիսիան և/կամ Տաթև համայնք):

Յուրաքանչյուր թիրախ համայնքում շնորհվելու է մեկ դրամաշնորհ:

2.3.4. Ոլորտներ կամ թեմաներ

Համայնքահեն սոցիալական ծառայություններ աղքատ, խոցելի և մարզինալացված սոցիալական խմբերի համար, հատկապես շեշտադրելով աղքատության և անհավասարության դեմ պայքարում սոցիալական աշխատանքի մոտեցումները:

Այս համատեքստում, **սոցիալական ծառայությունների** ներքո նկատի ունենք այնպիսի մասնագիտական միջամտությունները, որոնք նպատակաուղղված են կանխարգելելու սոցիալական հիմնախնդիրների (աղքատություն, գործազրկություն, բռնություն, խտրականություն և/կամ սոցիալական բացառում ֆիզիկական կամ մտավորության հաշմանդամության, տարիքի կամ այլ հանգամանքով պայմանավորված և այլն) առաջացումը կամ արձագանքելու դրանց հետևանքով առաջ եկած սոցիալական պաշտպանության կարիքներին: Մասնավորապես, դա ներառում է.

- Կանխարգելիչ ծառայությունները, որոնց նպատակն է նվազեցնել այն գործոնների ազդեցությունները, որոնք խորընդոտում են ընտանիքի կամ անհատի սոցիալական գործառնումը (համայնքային կազմակերպում, ակտիվացում, սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ և այլն),



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



- Պաշտպանության ծառայություններ, որոնց նպատակն է պահպանել և/կամ բարելավվել/վերականգնել սոցիալապես մեկուսացված անհատների սոցիալական գործառնումը հասարակությունում (վերականգնողական ծառայություններ, տնային խնամքի ծառայություններ, ճգնաժամային կենտրոններ և այլն)։

h.գ. Հումանիտար օգնության ծրագրերը չեն հանդիսանում վերը թվարկվածի մաս:

Սույն Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում կարող են ֆինանսավորվել այն սոցիալական ծառայությունները, որոնք փորձում են համապատասխանեցնել իրենց գործունեությունը սոցիալական ծառայությունների տրամադրման՝ միջազգայնորեն ընդունելի նվազագույն չափանիշ-սկզբունքներին և իրենց կողմից ներկայացված հայտերում բավարար մանրամասնությամբ նկարագրել են, թե ինչպիսի եղանակներով և միջոցներով է ապահովվելու այդ չափանիշ-սկզբունքների կիրառումը։

- **Իրավունքահեն մոտեցում** – Բոլոր գործողություններն ու միջամտությունները, ներառյալ ներքին կանոնակարգերն ու ընթացակարգերը հետևում և պահպանում են մարդու իրավունքների միջազգային նորմերը, ստանդարտներն ու սկզբունքները:
- **Համայնքահեն մոտեցում** – Կիրառվում են համայնքի ներգրավման ճկուն և արձագանքող մոտեցումներ, որոնք հիմնված են տեղական համատեքստի վրա: Համայնքի բնակչության կարիքները, կենսապայմաններն ու մտահոգությունները հաշվի են առնված:
- **Հաշվետվողականություն** – Ծառայություն տրամադրողները պատասխանատվություն ունեն հաշվետվողական լինել տեղական ինքնակառավարման մարմինների, շահառուների և համայնքի բնակիչների առաջ՝ իրենց գործողությունների, առաջնահերթությունների և ռեսուրսների բաշխման մասին կայացված որոշումների տեսանկյուններից:
- **Շահառուի լավագույն շահը** – Ծառայություն տրամադրողները պետք է որդեգրեն և կիրառեն շահառուների պաշտպանության և անվտանգության ապահովման ներքին քաղաքականություններ: Շահառուի լավագույն շահը առաջնային կարևորություն ունի:
- **Մի վնասի՛ր սկզբունք** - Պետք է արձագանքել անհատների, խմբերի և համայնքների բարեկեցությանն ու անվտանգությանը սպառնացող ցանկացած ֆիզիկական, տնտեսական, քաղաքական և/կամ սոցիալական ռիսկի: Ծառայություն տրամադրողները պետք է երաշխավորեն, որ պոտենցիալ ռիսկերը չեն հանգեցնի որևէ տեսակի խտրականության, ռեսուրսների անհավասար բաշխման, պիտակավորման կամ բռնության դրսևորումների:
- **Մասնակցություն** – Շահառուները պետք է ներգրավվեն և մասնակցություն ունենան սոցիալական ծրագրերի և ծառայությունների վերլուծության, պլանավորման, նախագծման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման գործընթացներում:
- **Ներառում** – Անբարենպաստ իրավիճակում հայտնված, խոցելի և մարգինալացված անհատները, ընտանիքները և խմբերը նույնացված են, ստանում են համապատասխան աջակցություն և երաշխավորված է, որ նրանց ձայնը լսված է սոցիալական ծառայությունների տրամադրման ողջ գործընթացում:



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



- **Մոնիթորինգ, գնահատում և ուսուցում** – Շահառուները ներգրավված են մոնիթորինգի, գնահատման և ուսուցման բոլոր գործընթացներում, այդ թվում մոնիթորինգի և գնահատման շրջանակների նախագծման, ցուցանիշների և տվյալների հավաքագրման մեթոդների սահմանման, տվյալների վերլուծության և բացահայտումների վավերացման: Ծրագրի մոնիթորինգի և գնահատման գործողությունների արդյունքում հավաքված տեղեկատվությունը պետք է ծառայեցվի շահառուների լավագույն շահին:
- **Գործընկերների հետ համակարգում** – Ծառայություն տրամադրողները պետք է համապատասխանեցնեն իրենց գործողություններն ու ծրագրերը գործընկերների և տեղական իշխանությունների գործողությունների հետ և գործեն՝ երաշխավորելու միջգերատեսչական համագործակցությունն ու ռեսուրսների համադրումը, նպատակ ունենալով բարձրացնել սոցիալական ծառայությունների տրամադրման որակը, հաշվետվողականությունը, ներդաշնակեցումն ու օպտիմալացումը:

2.3.5. Ենթադրամաշնորհի շրջանակներում ընդունելի գործողություններ

Ենթադրամաշնորհի շրջանակներում ընդունելի համարվող գործողություններն ու սկզբունքները մանրամասնորեն նկարագրված են սույն Ուղեցույցի 1.2 կետում:

Սույն Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն կարող է տրամադրվել ստորև նշված գործողությունների իրականացման համար.

- ա) **Համայնքահեն սոցիալական ծառայությունների ներդրում և/կամ փորձարկում կամ**
- բ) **Համայնքահեն սոցիալական ծառայությունների բարելավում և/կամ ընդլայնում:**

Հիմք ընդունելով արդեն իսկ մշակված և հաստատված Տեղական սոցիալական պլանները և դրանցում ամրագրված առաջնահերթությունները, առաջարկվող սոցիալական ծառայությունները պետք է թիրախավորեն կոնկրետ համայնքի կողմից սահմանված շահառու խմբերին և սոցիալական ծառայության ոլորտները:

Շիրակի մարզ

- Ախուրյան - ցերեկային ծառայություն հաշմանդամություն ունեցող անձանց համար, ցերեկային ծառայություն տարեց անձանց համար, զարգացման ծրագրեր խոցելի երեխաների և երիտասարդների համար (մասնագիտական կողմնորոշում, մասնագիտական կրթություն, խորհրդատվություններ), զարգացման ծրագրեր խոցելի չափահասների համար (մասնագիտական կողմնորոշում, մասնագիտական կրթություն, խորհրդատվություններ),
- Գյումրի - ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար, ներառական նախադպրոցական կրթություն երեխաների համար:



With funding from:
Austrian
Development
Cooperation



Տավուշի մարզ

- Իջևան – մոբիլ ծառայություն տարեց անձանց համար, սոցիալ-հոգեբանական ծառայություններ խոցելի երեխաների և ընտանիքների համար,
- Նոյեմբերյան – ցերեկային ծառայություն հաշմանդամություն ունեցող անձանց համար, ցերեկային ծառայություն տարեց անձանց համար:

Արմավիրի մարզ

- Արմավիր – ցերեկային ծառայություն տարեց անձանց համար, ցերեկային ծառայություն հաշմանդամություն ունեցող անձանց համար, ընտանիքի ամրապնդման բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոն, վերականգնողական ծառայություններ պատերազմից տուժած անհատների/ընտանիքների համար,
- Մեծամոր – ցերեկային ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար, մոբիլ ցերեկային ծառայություններ հաշմանդամություն ունեցող երիտասարդների և չափահասների համար, ցերեկային ծառայություն տարեց անձանց համար, ընտանիքի ամրապնդման բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոն:

Սյունիքի մարզ

- Գորիս - զարգացման ծրագրեր խոցելի երեխաների և երիտասարդների համար (մասնագիտական կողմնորոշում, մասնագիտական կրթություն, խորհրդատվություններ), վերականգնողական ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար, ընտանիքի ամրապնդման բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոն, ցերեկային ծառայություն տարեց անձանց համար:
- Միսիան - ցերեկային ծառայություն խոցելի երեխաների համար, ցերեկային ծառայություն տարեց անձանց համար, ընտանիքի ամրապնդման բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոն:
- Տաթև - ցերեկային ծառայություն խոցելի երեխաների համար, մոբիլ ծառայություն տարեց անձանց համար, զարգացման ծրագրեր խոցելի երեխաների և երիտասարդների համար (մասնագիտական կողմնորոշում, մասնագիտական կրթություն, խորհրդատվություններ):

Այն հայտերը, որոնք չեն համապատասխանի վերը նշված ոլորտներին, չեն կարող դիտարկվել հետագա գնահատման համար:

Բոլոր համայնքներում խոցելի/մարզինալացված, հատկապես Ընտանիքների անապահովության համակարգում չընդգրկված, անհատների և ընտանիքների ներառումը ծառայություններում խրախուսվում է:

Ընտրված յուրաքանչյուր գործողության պարագայում, հայտատուն պարտավորվում է.

Ա) ներկայացնել, թե առաջարկվող սոցիալական ծառայությունը ինչպե՞ս է արձագանքելու մեկ կամ մի քանի աղքատ և խոցելի խմբերի առանձնահատուկ կարիքներին, ներկայացնելով նաև շահառուների ակնկալվող թիվը,



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



Բ) Մոդելավորել ծառայություններն այնպես, որպեսզի դրանք շահեկան լինեն ողջ խոշորացված համայնքի համար, ներառյալ վարչական շրջաններից հեռու գտնվող բնակավայրերի,

Գ) Ներառել սոցիալական աշխատանքի/ սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում,

Դ) Ակտիվորեն խթանել միջուրտային համագործակցությունը և ուղղորդման ընթացակարգերը, ինչպես նաև փորձի փոխանակումը պետական սոցիալական աշխատողների և հարակից մասնագիտությունների ներկայացուցիչների հետ և

Ե) Աշխատել ծառայության ֆինանսավորման (համայնքային և/կամ պետական) կայունության ապահովման ուղղությամբ, ինչը պետք է արտացոլված լինի HWI-ին և ՀՄԱԱ-ին ներկայացվող ընթացիկ և վերջնական հաշվետվություններում:

Ծրագրեր և գործողություններ, որոնք ՉԵՆ կարող ֆինանսավորվել սույն Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում.

- Ծրագրերը, որոնք չեն համապատասխանում վերը նշված ոլորտային պահանջներին,
- Ծրագրեր/գործողություններ, որոնք հիմնականում կամ բացառապես վերաբերում են սեմինարների, կոնֆերանսների, աշխատանքային հանդիպումների և կոնգրեսների մասնակցելու նպատակով անհատական հովանավորչությանը,
- Ծրագրեր/գործողություններ, որոնք հիմնականում կամ բացառապես վերաբերում են դասընթացներին մասնակցության կամ հետազոտությունների իրականացման անհատական կրթաթոշակների տրամադրմանը,
- Ծրագրեր/գործողություններ, որոնք վերաբերում են միայն մեկանգամյա կոնֆերանսների և/կամ վերապատրաստումների իրականացմանը: Կոնֆերանսները և/կամ վերապատրաստումները կարող են ֆինանսավորվել միայն այն դեպքում, եթե դրանք հանդիսանում են «Միասին հանուն սոցիալական համայնքների» ծրագրի գործողությունների ավելի լայն շրջանակի մաս,
- Քաղաքական կուսակցություններին աջակցող գործողություններ/ծրագրեր,
- Կրոնական-քարոզչական գործողություններ ներառող ծրագրեր:



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



2.4. Տեսանելիության ապահովում

Հայտատուները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլեր, որպեսզի հանրայնացնեն այն փաստը, որ Եվրոպական միությունը և Ավստրիական զարգացման համագործակցությունը ֆինանսավորում կամ համաֆինանսավորում են Ծրագիրը և, որ այն իրականացվում է ՀՍԱԱ-ի, HWI-ի, ինչպես նաև ԳՈԻՄ ՀԿ-ի և ԸՀ ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

2.5. Թույլատրելի ծախսեր

Միայն թույլատրելի ծախսերը կարող են ֆինանսավորվել սույն ենթադրամաշնորհի շրջանակներում: Ծրագրի բյուջեն միաժամանակ հանդիսանում է և ծախսերի նախահաշիվ, և թույլատրելի ծախսերի վերին սահման:

Թույլատրելի և արգելված ծախսերի դասակարգումը տրված է ստորև:

2.5.1. Թույլատրելի ծախսեր

Ա) Մարդկային ռեսուրսներ

ա. Ծրագրի անձնակազմի անդամների աշխատանքային պայմանագրերով հաստատված աշխատավարձեր (համախառն աշխատավարձ ներառյալ սոցվճարները և այլ համապատասխան ծախսերը):

բ. Տեղական գործուղումների համար նախատեսված օրապահիկներ. օրապահիկները ծածկում են զիջերակացի, սնունդի, տեղաշարժման ծախսերը և հաշվարկվում են հիմք ընդունելով գործող օրենսդրությամբ սահմանված չափանիշները:

Բ) Ծրագրային գործողությունների հետ կապված ճանապարհածախսերն ու մեքենայի ծախսերը

ա. Հանրային տրանսպորտով (ավտոբուս, գնացք և այլն), պայմանագրով աշխատող տրանսպորտային կազմակերպությունների միջոցով կամ գրասենյակի մեքենաներով կատարված ճամփորդությունները:

Գ) Սարքավորումներ և գրասենյակային պարագաներ (եթե պատշաճ կերպով հիմնավորված են և ուղղակիորեն վերաբերում են ծրագրային գործողություններին)

ա. Կահույք

բ. Համակարգչային տեխնիկա

գ. Ծառայությունների կենտրոնների բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ

դ. Այլ

Դ) Տեղական գրասենյակ կամ ծառայության կենտրոն

ա. Բենզին, գրասենյակի մեքենայի պահպանման ծախսեր

բ. Գրասենյակային պարագաների ձեռքբերման ծախսեր

գ. Այլ ծառայություններ (հեռախոս, էլեկտրաէներգիա, ջեռուցում, պահպանման ծախսեր)



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



դ. Բանկային վճարներ և ֆինանսական ծառայություններ

Այն դեպքերում, երբ Տեղական գրասենյակին կամ ծառայության կենտրոնին վերաբերող ծախսերն իրականացվում են մի քանի ծրագրի միջոցներին, պետք է իրականացվի գրասենյակային ծախսերի բաշխում՝ համամասնության սկզբունքով:

Ե) Ծրագրային գործողությունների իրականացման այլ ծախսեր և ծառայություններ

ա. Տեղական արտաքին փորձագետներ,

բ. Հրատարակումների, տեղեկատվական թերթիկների, բրոշյուրների, հետազոտությունների տպագրության ծախսեր,

գ. Թարգմանություններ՝ գրավոր և բանավոր,

դ. Կոնֆերանսների/սեմինարների և վերապատրաստումների համար նախատեսված ծախսեր (տարածքների և սարքավորումների վարձակալություն, սննդի ապահովում, բաժանվող նյութեր, մասնակիցների տեղափոխման ծախսեր և այլն),

ե. Ծրագրի տեսանելիությունը բարձրացնելուն ուղղված գործողությունների համար նախատեսված ծախսեր (բաների տպագրության, թերթում գովազդների տեղադրման և այլ ծախսեր):

2.5.2 Արգելված ծախսեր

Ստորև նշված ծախսերն արգելված են՝

- պարտքեր և պարտքերի սպասարկման ծախսեր (տոկոսներ),
- հնարավոր կորուստների համար պահուստավորում կամ ապագա պարտականությունների կատարման հետ կապված ծախսեր,
- Հաղթող հայտատուի կողմից հայտարարված ծախսեր, որոնք, արդեն իսկ ֆինանսավորվում են Եվրոպական Միության (այդ թվում EDF-ի կողմից) այլ դրամաշնորհի շրջանակում,
- Տարածքի կամ շենքի ձեռքբերում,
- Արտարժույթի փոխանակումներից առաջացած կորուստներ,
- Երրորդ անձանց վարկերի տրամադրում,
- Պետության ներկայացուցիչների կամ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների աշխատավարձեր:

3. ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1. Հայտի բովանդակությունը/ Հայտի փաթեթը



With funding from:
Austrian
Development
Cooperation



Ենթադրամաշնորհային մրցույթին մասնակցելու համար, հայտատու-կազմակերպությունը, որը համապատասխանում է սույն Ուղեցույցի 2.2. կետով սահմանված պահանջներին, պետք է լրացնի և ներկայացնի Ծրագրային հայտի փաթեթը:

Հայտի փաթեթը կազմված է Ծրագրային առաջարկից և հավելվածներից:

Ծրագրային առաջարկը ներառում է՝

Ա. **Ենթադրամաշնորհային ծրագրի հայտը** (Ուղեցույցի Հավելված A), որն իր հերթին ներառում է.

1. Տեղեկատվություն Հայտատուի մասին
2. Ծրագրի ամփոփ նկարագիր (առավելագույնը՝ 2 էջ)
3. Ծրագրի նկարագրություն (առավելագույնը՝ 5 էջ)
 - 3.1 Ծրագրի նպատակները
 - 3.2 Ծրագրի ակնկալվող արդյունքները
 - 3.3 Ծրագրի թիրախ մարզը/համայնքը
 - 3.4 Ծրագրի թիրախ խումբը և շահառուները
 - 3.5 Պլանավորված ծառայության նկարագրությունը
 - 3.6 Համապատասխանությունը կոնկրետ թեմաներին/ սեկտորներին/ ոլորտներին
 - 3.7 Ծրագրի շահագրգիռ կողմերը
 - 3.8 Ծրագրի կայունությունը
 - 3.9 Ծրագրի կառավարումը և կազմակերպչական կառուցվածքը
4. Ծրագրի իրականացման գործողությունների պլանը
5. Ծրագրի բյուջեն (Ուղեցույցի Հավելված B)
6. Հայտատուի փորձառությունը
7. Հայտատուի հայտարարագիրը (կնքված և ստորագրված)
8. Հայտի ստուգաթերթը
9. Հայտին կից ներկայացվող փաստաթղթերի (հավելվածներ) ցանկ

Պահանջվող փաստաթղթեր:

- Ա) Կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճե,
- Բ) Կազմակերպության կանոնադրության պատճե,
- Գ) Համաֆինանսավորման դեպքում՝ ծրագրի շրջանակներում համաֆինանսավորման գումարի, տեսակի և աղբյուրի մասին գրավոր հայտարարություն (ստորագրված և կնքված լիազորված անձի կողմից),



With funding from:
Austrian
Development
Cooperation



Հայտի փաթեթի մաս կազմող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները կարող եք ներբեռնել ՀՄԱՍ վեբկայքից՝ www.aasw.org, ինչպես նաև դրանք կարող եք ձեռքբերել գրելով info@aasw.org էլիասցեին:

Հայտերը պետք է ներկայացվեն՝ Դրամաշնորհների հայտի ձևաթղթում նկարագրված հրահանգներին համաձայն (Տե՛ս սույն ուղեցույցի Հավելված A-ում): Հայտի ձևաթուղթն անհրաժեշտ է լրացնել հնարավորինս ուշադիր և հստակ, որպեսզի այն հնարավոր լինի համապատասխան կերպով գնահատել: Վերը նշված՝ պարտադիր կերպով պահանջվող հավելվածներից բացի, որևէ այլ հավելված հաշվի չի առնվելու գնահատման ընթացքում:

Ենթադրամաշնորհային ծրագրի հայտը պետք է լրացվի հայերեն (Տառատեսակը՝ Arial կամ Sylfaen, տառաչափը՝ 10 pt, լուսանցքները՝ 2 սմ, միջտողային հեռավորությունը՝ 1), իսկ Ծրագրի ամփոփ նկարագրի (Դրամաշնորհային ծրագրի հայտ, Կետ 2.) հատվածը՝ անգլերեն: Ձեռագիր հայտերը չեն ընդունվում:

Ենթադրամաշնորհային ծրագրի հայտի Ձևաթղթի ստուգաթերթում ներառված կետերում տեղ գտած որևէ սխալմունք, կամ հայտում տեղ գտած որևէ անհամապատասխանություն (օրինակ, բյուջեում և աշխատաթերթում լրացված թվերի մեջ անհամապատասխանություն) կարող է հանգեցնել հայտի մերժմանը:

Ենթադրամաշնորհային ծրագրի ամբողջական հայտի փաթեթը պետք է ներառի.

- Լրացված և համապատասխան կերպով ստորագրված/կնքված հայտը (Հավելված A-ի սկանավորված տարբերակը՝ pdf ձևաչափով), ներառյալ Հայտի ստուգաթերթը,
- Լրացված Բյուջեի ձևաթուղթը (Հավելված B), ինչպես էլեկտրոնային խմբագրելի տարբերակը (MS Excel), այնպես էլ կնքված/ստորագրված սկանավորված տարբերակը՝ pdf ձևաչափով:
- Պահանջվող հավելվածների սկանավորված տարբերակները:

3.2. Ու՞ր և ինչպե՞ս ուղարկել Հայտերը.

Ենթադրամաշնորհային Հայտի փաթեթը պետք է ներկայացնել էլեկտրոնային փոստի միջոցով՝ նամակ ուղարկելով info@aasw.org էլիասցեին և պատճենելով՝ tatevik.karapetyan@aasw.org ին: Էլեկտրոնային նամակի Թեմա (subject) տողում պարտադիր կերպով անհրաժեշտ է նշել հետևյալ հղումը՝ **845_SGP_Application – NAME OF THE APPLICANT_TARGET COMMUNITY**: Ի լրումն, նամակին կցված փաստաթղթերին, մինևույն նամակում՝ Ենթադրամաշնորհային հայտի փաթեթն անհրաժեշտ է ուղարկել նաև **էլեկտրոնային հղմամբ** (օրինակ՝ WeTransfer, Google Drive և այլն):

Հայտատուներին կուղարկվի պատասխան նամակ՝ հաստատելով հայտի ստացումը: Եթե Հայտի ներկայացումից հետո 48 ժամվա ընթացքում չեք ստացել հաստատող նամակ, խնդրում ենք անմիջապես կապվել ՀՄԱՍ-ի հետ՝ ուղարկելով նամակ (առանց հավելվածների) վերը նշված էլիասցեներին կամ զանգահարելով՝ +37495605600 կամ +37460540150:



With funding from:
Austrian
Development
Cooperation



Այլ եղանակներով ուղարկված հայտերը (ֆաքս, փոստային ծառայություն) կարող են մերժվել:

Հայտատուները պետք է հավաստեն, որ իրենց կողմից ներկայացված հայտերն ամբողջական են՝ օգտագործելով դրամաշնորհային հայտի ստուգաթերթը: Ոչ ամբողջական հայտերը կարող են մերժվել:

3.3. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ **29.08.2022, 15:00 տեղական ժամանակով:**

Վերջնաժամկետից հետո ներկայացված բոլոր Հայտերը ենթակա են մերժման:

3.4. Ենթադրամաշնորհային ծրագրերի և հայտերի ներկայացման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն

Ծրագրի հետ կապված հարցերը հնարավոր է ուղարկել էլեկտրոնային նամակով՝ ամբողջական հայտի ներկայացման համար նախատեսված վերջնաժամկետի լրանալուց ոչ ուշ քան 21 օր առաջ՝ ներքոնշյալ էլեկտրոնային հասցեին՝ նամակի թեմայի բաժնում հստակորեն նշելով դրամաշնորհային ծրագրի հղումը:

Էլեկտրոնային հասցե՝ tatevik.karapetyan@aasw.org

Դոնորը վերը նշված ժամկետից հետո ստացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ տալու պարտավորություն չունի: Հարցերի պատասխանները կտրամադրվեն հայտերի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան 11 օր առաջ:

Հայտ ներկայացնողների նկատմամբ հավասար պայմաններ ապահովելու նպատակով, Դոնորը չի կարող հայտատուներին տեղեկատվություն տրամադրել՝ նրանց՝ մրցույթի պայմաններին կամ Ծրագրի պահանջներին Հայտի համապատասխանության վերաբերյալ:

Հարցերին անհատական պատասխաններ չեն տրամադրվելու: Բոլոր հարցերն ու պատասխանները, ինչպես նաև հայտատուներին վերաբերող կարևոր ծանուցումները գնահատման ընթացքում տրվելու են բացառապես գրավոր կերպով և հրապարակվելու են www.aasw.org կայքում, ուստի հայտատուներին խորհուրդ է տրվում կանոնավոր կերպով հետևել կայքում զետեղվող տեղեկատվությանը հարցերի և պատասխանների վերաբերյալ տեղեկացված լինելու համար:

4. ՓՈՔԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայտերը ուսումնասիրվելու և գնահատվելու են «Միասին հանուն սոցիալական համայնքների» ծրագրի թիմի ներկայացուցիչների և արտաքին գնահատողների օգնությամբ: Հայտատուների կողմից ներկայացված բոլոր ծրագրերը գնահատվելու են համաձայն ներքոնշյալ քայլերին ու չափորոշիչներին:

4.1. Քայլ 1: Հայտերի բացում և սահմանված վարչական պահանջներին դրանց համապատասխանության ստուգում



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



Ծրագրային առաջարկը/հայտը կդիտարկվի մրցույթին մասնակցելու տեսանկյունից, եթե այն համապատասխանում է ստորև բերված պահանջներին և չափորոշիչներին:

- Ենթադրամաշնորհային հայտն ամբողջական է և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացված են,
- Ենթադրամաշնորհային հայտը ներկայացված է համապատասխան ձևաչափով,
- Հայտատուն համապատասխանում է Փոքր Դրամաշնորհային Ծրագրի մրցույթին մասնակցելու համար սահմանված պահանջներին, այնպես, ինչպես նշված է սույն ուղեցույցի 2.2 կետում (այսինքն՝ իրավաբանական կարգավիճակը, գրանցման վայրն ու գործունեության տևողությունը, նախկինում ունեցած ծրագրային փորձառությունը և ֆինանսական կարգավիճակը),
- Հայտատուի կողմից ներկայացված դրամաշնորհի գումարը և ներդրումը համապատասխանում է Ենթադրամաշնորհային մրցույթի պահանջներին (ինչպես նշված է սույն Ուղեցույցի 2.1 կետում),
- Հայտը ներկայացվել է սահմանված ժամկետներում:

Եթե հայտի ուսումնասիրությունը բացահայտում է, որ առաջարկվող աշխատանքները չեն համապատասխանում մրցույթին մասնակցության պահանջներին, կամ անհրաժեշտ տեղեկատվությունը բացակայում է, կամ ճիշտ չէ, հայտը կարող է մերժվել և հետագա գնահատման համար չդիտարկվել:

Վերոնշյալ ստուգումների փաստաթղթավորումն իրականացվում է յուրաքանչյուր հայտի համար առանձին:

Նշված ստուգումն անցած հայտերը կենթարկվեն ավելի մանրակրկիտ ֆինանսական և տեխնիկական գնահատման:

4.2. ՔՍՅԼ 2: Հայտերի տեխնիկական և ֆինանսական գնահատում

Հայտերը կդիտարկվեն և կգնահատվեն հատուկ այդ նպատակով ձևավորված գնահատման հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի անդամների թիվը առնվազն 5-ն է: Դրանում ներառված են HWI-ի, տեղական գործընկերների, միջսեկտորիալ համայնքային ցանցերի ներկայացուցիչներ: Դրամաշնորհային ծրագրերի գնահատման հանձնաժողովի բոլոր անդամները պետք է ստորագրեն անաչառության և գաղտնիության պահպանման հայտարարագիր:

Հայտերի, այդ թվում ներկայացված բյուջեի ու հայտատուի ինստիտուցիոնալ կարողությունների, գնահատումն իրականացվելու է համաձայն ստորև տրված գնահատման սանդղակի: Հայտը կարող է ստանալ առավելագույնը 100 միավոր:

Գնահատման չափանիշները բաժանված են ըստ բաժինների և ենթաբաժինների: Ենթաբաժինները հիմնականում գնահատվում են 1-5 միավորանոց սանդղակով, որտեղ



With funding from:
Austrian
Development
Cooperation



համապատասխանաբար 1-ը նշանակում է շատ վատ, 2-ը՝ վատ; 3-ը՝ ընդունելի; 4-ը՝ լավ, 5-ը՝ գերազանց: 10-միավորանոց սանդղակով գնահատվող ենթաբաժնի դեպքում, 1-ը նշանակում է շատ վատ, իսկ 10-ը՝ գերազանց:

Գնահատման սանդղակ

Բաժին	Առավելագույն միավոր
1. Հայտատուի փորձառությունը և գործառնական կարողությունները	20
1.1. Արդյո՞ք հայտատուն ունի համապատասխան տեխնիկական փորձառություն սոցիալական ոլորտում:	5
1.2. Արդյո՞ք հայտատուն ունի մայրաքաղաքից դուրս, ինչպես նաև ընտրված թիրախ համայնքում/տարածաշրջանում ծրագրերի իրականացման ապացուցելի փորձառություն.	5
1.3. Արդյո՞ք հայտատուն ունի ծրագրերի կառավարման բավարար փորձառություն և կարողություններ (ներառյալ անձնակազմը, սարքավորումները, բյուջեի կառավարման կարողությունները)	5
1.4. Արդյո՞ք Հայտատուն բավարար փորձառություն ունի համայնքային կազմակերպման, շահառուների ներգրավման/մասնակցության ապահովման և/կամ շահերի պաշտպանության և լոբբինգի իրականացման բնագավառներում.	5
2. Ծրագրի համապատասխանությունը	20
2.1. Ինչպիսի՞ հստակությամբ են սահմանված և ընտրված թիրախային խմբերը և վերջնական շահառուները առաջարկվող ծառայության համատեքստում: Արդյո՞ք շահառուների կարիքներն ու առանձնահատուկ իրավիճակը ներկայացված է հստակորեն: Արդյո՞ք ծառայությունը ներգրավում է նաև Ընտանիքների անապահովության համակարգից դուրս մնացած մարզինալացված խմբերին.	5
2.2. Որքանո՞վ են թիրախ խմբերի/ վերջնական շահառուների յուրահատուկ կարիքներն ու իրավիճակը համապատասխանում առաջարկվող սոցիալական ծառայությանը: Այլ կերպ ասած, ինչպիսի՞ ազդեցություն կունենա և ի՞նչ կփոխի առաջարկվող սոցիալական ծառայությունը թիրախ խմբերի/շահառուների կյանքում: Արդյո՞ք առաջարկվող Ծրագիրը/ծառայությունը կբարելավվի թիրախ խմբերի իրավիճակը:	5
2.3. Արդյո՞ք առաջարկվող Ծրագիրն անդրադառնում է սույն Ուղեցույցի 2.3.5. կետով սահմանված ենթաթեմաներին/ սեկտորներին/ ոլորտներին.	10



With funding from:
Austrian
Development
Cooperation



3. Ծրագրի նկարագրությունը	20
3.1 Արդյո՞ք Ծրագրի նպատակներն ու ակնկալվող արդյունքները իրագործելի են և համահունչ:	5
3.2 Արդյո՞ք առաջարկվող ծառայությունը նկարագրված է համալիր և պրոֆեսիոնալ կերպով: Արդյո՞ք հայտատուն ամբողջապես պատկերացնում է առաջարկվող ծառայության էությունը և դրա իրականացման մեթոդաբանությունը, ներառյալ ծառայության հասանելիության/մատչելիության ապահովումն ու թիրախ խմբերի ներգրավման ռազմավարությունները:	5
3.3 Որքանո՞վ են սույն Ուղեցույցի 2.3.4. կետում տրված սոցիալական ծառայությունների որակի ապահովման նվազագույն չափանիշ-սկզբունքները ներառված և պահպանված առաջարկվող ծրագրում:	5
3.4 Արդյո՞ք գործողությունների պլանը հստակ է և իրատեսական: Արդյո՞ք առաջարկվող գործողությունները պրակտիկ են և համահունչ Ծրագրի նպատակներին և ակնկալվող արդյունքներին:	5
4. Ծրագրի կառավարումն ու կազմակերպչական կառուցվածքը	10
4.1 Արդյո՞ք առաջարկվող կազմակերպչական կառուցվածքը և գործառնությունների բաշխումը իրատեսական են և համահունչ Ծրագրի շրջանակներում պլանավորված գործողությունների իրականացման և սոցիալական ծառայությունների մատուցման տեսանկյունից: Արդյո՞ք Ծրագրային թիմի անդամների միջև պարտականությունների բաշխումն հստակ և իրատեսական է:	5
4.2 Արդյո՞ք Ծրագիրը ենթադրում է համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավում կամ նրանց հետ համատեղ ցանցային աշխատանքների իրականացում (օրինակ, խորհրդակցություններ կամ այլ գործողություններ տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հետ, և այլն)	5
5. Ծրագրի կայունությունը և ազդեցությունը	10
5.1 Արդյո՞ք առաջարկվող ծրագրից ակնկալվող արդյունքները շարունակական և կայուն են ֆինանսական տեսանկյունից (ինչպե՞ս են գործողությունները ֆինանսավորվելու ծրագրի ֆինանսավորման ավարտից հետո)	5
5.2 Արդյո՞ք առաջարկվող ծրագրից ակնկալվող արդյունքները շարունակական և կայուն են ինստիտուցիոնալ տեսանկյունից (արդյո՞ք պատասխանատու կառույցները հնարավորություն կտան շարունակել ծառայությունների մատուցումը Ծրագրի ավարտից հետո, արդյո՞ք առկա է հանձնառություն շարունակել և հանձնառություն ստանձնել պահպանելու Ծրագրի ձեռքբերումները)	5



With funding from:
Austrian
Development
Cooperation



6. Ծրագրի բյուջեն	20
6.1 Արդյո՞ք գործողությունները համապատասխան կերպով արտացոլված են բյուջեում:	5
6.2 Արդյո՞ք աշխատանքների իրականացման համար առաջարկված հիմնական միջոցները (սարքավորումներ, նյութեր, պարագաներ) պատշաճ կերպով բացատրվում են և գնումները հիմնավորված են նպատակների ու ակնկալվող արդյունքների տեսանկյունից:	5
6.3 Արդյո՞ք ծրագրով առաջարկված ծախսերի և ակնկալվող արդյունքների հարաբերակցությունը գոհացուցիչ է:	5
6.4 Արդյո՞ք հայտատուն ներկայացնում է Ծրագրի կանխիկ կամ ապրանքային տեսքով համաֆինանսավորման համարժեք և ստուգելի (լրացուցիչ փաստաթղթավորում) աղբյուրներ: Արդյո՞ք համաֆինանսավորման աղբյուրներն ու տեսակները պատշաճ կերպով հիմնավորված են և բացատրված:	5
Հնարավոր առավելագույն միավոր	100

Այն դեպքերում, երբ գնահատման արդյունքում Հայտի ընդհանուր գումարային միավորը ցածր է 40-ից, ապա հայտը մերժվում է: Եթե առաջին բաժնի ընդհանուր միավորների քանակը 12-ից պակաս է՝ հայտը, նույնպես մերժվում է:

Համապատասխանության հարցում կասկածների պարագայում, Գնահատող հանձնաժողովը կարող է հայտատուից պահանջել լրացուցիչ հիմնավորող փաստաթղթերի ներկայացում:

Դոնորն իրավունք է վերապահում այցելելու հայտատուին՝ ծրագրի իրականացման համար նախատեսված վայրի/տարածքի վերաբերյալ տեղում գնումներ իրականացնելու նպատակով, որպեսզի ստուգի հայտում ներկայացված ռեսուրսների առկայությունը ու ենթադրությունների հավաստիությունը:

Նախնական ընտրություն. Գնահատման ավարտին կկազմվի համապատասխան աղյուսակ, որտեղ հայտատուները կդասավորվեն համաձայն իրենց հավաքած միավորների (բարձրից ցածր սկզբունքով): Ամենաբարձր միավորներ հավաքած հայտերը պայմանականորեն կընտրվեն, մինչ այս ծրագրային առաջարկի համար նախատեսված բյուջեի սահմանաչափի լրանալը: Ի լրումն՝ հայտատուների լրացուցիչ պահուստային ցուցակ կկազմվի՝ նույն չափորոշիչներին համապատասխան:

4.3. ՔԱՅԼ 3: Հայտատուների ծանուցումը

Հայտատուները գրավոր կերպով կծանուցվեն գնահատող հանձնաժողովի՝ իրենց հայտին վերաբերող որոշումների մասին, իսկ, մերժվելու դեպքում՝ բացասական որոշման կայացման պատճառների մասին:



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



Գնահատման հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա դոնորը իրավասու է հայտատուներից իրենց հայտերի մեջ փոփոխություններ/ճշգրտումներ մտցնելու պահանջ ներկայացնել՝ ծրագրի իրատեսականությունն ու շարունակականության ապահովման հնարավորությունները բարձրացնելու նպատակով: Եթե պայմանականորեն ընտրված հայտատուն համաձայնում է իրականացնել առաջարկվող փոփոխությունները, ապա դրամաշնորհային հայտի ձևաթղթում գրավոր կերպով իրականացվում են համապատասխան փոփոխությունները, որից հետո միայն հաջորդում է դրամաշնորհային պայմանագրի կնքման գործընթացը:

Այն հայտատուները, որոնք ընտրվել են Գնահատող հանձնաժողովի կողմից, սակայն հրաժարվում են դրամաշնորհն ընդունել և/կամ այն հայտատուները, որոնք պայմանականորեն ընտրվել են Գնահատող հանձնաժողովի կողմից, սակայն հրաժարվում են կատարել պահանջվող փոփոխությունները, կփոխարինվեն պահուստային ցանկում հաջորդ ամենաբարձր միավորներ հավաքած հայտատուով, որի առաջարկը գտնվում է սույն Դրամաշնորհային մրցույթով նախատեսված բյուջեի սահմաններում:

4.4. ՔԱՅԼ 4: Ամփոփում և Ենթադրամաշնորհային պայմանագրերի կնքում

Անհրաժեշտ փոփոխություններ/ճշգրտումներ իրականացնելուց և դրամաշնորհի տրամադրման մասին որոշման կայացումից հետո հաղթող հայտատուները կստորագրեն Ենթադրամաշնորհի տրամադրման պայմանագիր Դոնորի, այն է՝ Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի հետ:

5. ԴՈՆՈՐԻ՝ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Հաղթող հայտատուները պարտավոր են ապահովել, որ Հայտում առաջարկված գործողություններն իրականացվեն ու արդյունքներն ձեռք բերվեն (ներառյալ հաշվետվությունների ներկայացման պահանջները, Տե՛ս կետ 5.1) ճիշտ այնպես, ինչպես նախատեսված է ներկայացված Հայտի նկարագրությունում, Գործողությունների պլանում և հաստատված է բյուջեով: Դրանք հանդիսանում են Ենթադրամաշնորհի տրամադրման պայմանագրի մաս և համապատասխանում են վերջինիս պայմաններին ու ընդհանուր դրույթներին:

5.1. Հաշվետվողականություն և վճարման պայմաններ

Ենթադրամաշնորհի մասին պայմանագրում ֆիքսված ամբողջական բյուջեի 50%-ը կփոխանցվի հաղթող հայտատուին պայմանագրի ստորագրումից հետո:

Ծրագրի իրականացման առաջին կեսի ավարտից հետո հետագա վճարումների մինչև 45% գումարի փոխանցման համար, պետք է ներկայացվեն և հաստատվեն ներքոնշյալ պայմանները.

ա. Ֆինանսական հաշվետվություն՝ բոլոր ծախսերի վերաբերյալ ուղեկցող փաստաթղթերով՝ ներկայացված ֆինանսական հաշվետվության համար նախատեսված ձևանմուշին և դոնորի առաջադրած հրահանգներին համաձայն:



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



բ. Վճարման խնդրագիր՝ հետագա ֆինանսավորման համար:

գ. Ընթացիկ բովանդակային հաշվետվություն՝ օգտագործելով դոնորի կողմից տրամադրված բովանդակային հաշվետվության ձևանմուշը:

Ենթադրամաշնորհային ծրագրի բյուջեի մնացյալ 5%-ը փոխանցվում է վերջնական բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների, համաֆինանսավորման ապացույցների (եթե առկա է) և վերջնական վճարման խնդրագրի ներկայացումից ու դոնորի կողմից հաստատվելուց հետո՝ Ենթադրամաշնորհային համաձայնագրի պայմաններին համաձայն: Եթե Ենթադրամաշնորհային ծրագրի համար տրամադրվող ամբողջական գումարը պակաս է Ենթադրամաշնորհի մասին կնքված պայմանագրով սահմանված գումարի չափից, ապա Ենթադրամաշնորհը պետք է սահմանափակվի գումարի այն չափով, որը ձեռք է բերվել Դոնոր կազմակերպության կողմից ֆինանսավորման առավելագույն տոկոսի պայմանով, ինչպես սահմանված է Ենթադրամաշնորհի մասին կնքված պայմանագրում:

Դոնորը, անհրաժեշտության դեպքում, իրավունք ունի պահանջելու լրացուցիչ ֆինանսական և բովանդակային հաշվետվություններ՝ ամսեկան կամ երկամսյա միջակայքերով:

5.2. Մոնիթորինգ և գնահատում

Ինչպես Ծրագրի ընթացքում, այնպես էլ ֆինանսավորման ավարտին, «Միասին հանուն սոցիալական համայնքների» ծրագրի անձնակազմը և/կամ դոնորը կանոնավոր մոնիթորինգ կիրականացնեն ընթացքի և արդյունքների նկատմամբ: Ի հավելումն, Ծրագրերի ավարտական գնահատում կիրականացվի արտաքին փորձագետի կողմից:

Հաղթող հայտատուն/ները պետք է համագործակցեն ծրագրային թիմի հետ և մոնիթորինգ ու գնահատում իրականացնողներին տրամադրեն ծրագրային գործողություններին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ու այլ անհրաժեշտ տեղեկատվություն: Բացի այդ՝ նրանք ծրագրային թիմին պետք է տրամադրեն ծրագրին վերաբերող տարածքներ ու շինություններ մուտք գործելու հնարավորություն՝ ձեռքբերված սարքավորումների/գույքացանկի, ինչպես նաև ծրագրի առաջընթացի վերաբերյալ ստուգումներ իրականացնելու նպատակով:

Մոնիթորինգն ու գնահատումն, ընդհանուր առմամբ, կտարածվի ներքոնշյալի վրա

- Վճարումների մոնիթորինգ. Ենթադրամաշնորհի միջոցների ծախսեր և ենթադրամաշնորհային ծրագրի շահառուի կողմից տրամադրված ֆինանսական և ոչ ֆինանսական ներդրումները և դրանց համապատասխանությունը բյուջեին ու վճարումների գրաֆիկին:
- Մոնիթորինգային գործողություններ. Իրականացված գործողությունների տեսակները, բնույթն ու ժամկետները:
- Ենթադրամաշնորհի միջոցների հաշվին ձեռքբերված բոլոր սարքավորումների և/կամ ակտիվների պահպանման և օգտագործման նկատմամբ մոնիթորինգ:
- Ծրագրի իրականացման ընթացքում, համաձայն պլանավորման՝ ծրագրային գործընկերների և անձնակազմի ներգրավման նկատմամբ մոնիթորինգ:



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



- Արդյունքների մոնիթորինգ. մատուցված ծառայությունների քանակ, իրականացված կյոք սեղան քննարկումների քանակ և այլն:

5.3. Աուդիտ

«Միասին հանուն սոցիալական համայնքների» Ծրագրի դոնորները կարող են դիմել Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիային (որպես Պայմանագրի կողմ)՝ Ենթադրամաշնորհի շրջանակներում տրամադրված միջոցների նկատմամբ ֆինանսական աուդիտի իրականացման պահանջով: Աուդիտը կարող է տեղի ունենալ ինչպես «Միասին հանուն սոցիալական համայնքների» ծրագրի իրականացման ընթացքում, այնպես էլ՝ ծրագրի ավարտից հետո 5 տարի ընթացքում:

Հաղթող հայտատուն պարտավոր է պահպանել դրամաշնորհին վերաբերող բոլոր փաստաթղթերը դրամաշնորհ ստանալուց հետո առնվազն 7 տարի: Աուդիտ իրականացնող կազմակերպության համար պետք է հասանելի լինեն ծրագրին վերաբերող բոլոր փաստաթղթերը, հաշիվները, նյութերն ու ծրագրային օբյեկտները, ինչպես նաև քաղվածքներ և պատճեններ վերցնելու հնարավորությունները՝ փաստաթղթերի պահպանման ողջ ընթացքի համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽՁՈՒՄԸ

6.1. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը կամ կասեցումը

Եթե հաղթող հայտատուն շարունակաբար չի կատարում ենթադրամաշնորհային համաձայնագրի պայմաններն ու ընդհանուր դրույթները, ապա Դոնորը կարող է դադարեցնել կամ կասեցնել ենթադրամաշնորհն ամբողջությամբ կամ մասնակիորեն: Ենթադրվում է, որ դրամաշնորհի տրամադրմանը նախորդող նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև դոնորի և հաղթող հայտատուի միջև համագործակցությունը զերծ կմնա ենթադրամաշնորհային պայմանագրի կասեցումից կամ դադարեցումից: Այնուամենայնիվ, այդ միջոցը կկիրառվի առաջ եկած խնդիրների լուծման փորձերի ձախողման դեպքում:

Դադարեցումը նշանակում է, որ հաղթած հայտատուն պետք է փոխհատուցի բոլոր այն ֆինանսական միջոցները, որոնք ծախսվել են իր կողմի՝ ակտիվների ձեռքբերման համար, կամ վերադարձնի այդ ակտիվները:

6.2. Ենթադրամաշնորհային ծրագրի ավարտը

Վերջնական մոնիթորինգի ու վերջնական բովանդակային ու ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև վերջնական վճարման խնդրագրի գնահատման հիման վրա «Միասին հանուն սոցիալական համայնքների» ծրագրի անձնակազմի կողմից ենթադրամաշնորհային ծրագրի իրականացումը դրական գնահատելու դեպքում՝ Դոնորի կողմից կսահմանվի և հաղթող հայտատուին կփոխանցվի վերջնական վճարումը:

Դրական գնահատման դեպքում, Դոնորը (ՀՄԱԱ) ծրագրի ավարտին, կստորագրի վերջնական հանձնման վկայական, որով հաղթող հայտատուի կողմից ծրագրի իրականացման ընթացքում



With funding from:
Austrian
Development
Cooperation



ձեռքբերված ակտիվները, որոնք ժամանակավոր գործածության էին հանձնված, կփոխանցվեն հաղթող հայտատուին:

7. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Առաջադրանք/ գործողություն (ի՞նչ)	Պատասխանատու (ո՞վ)	Ժամկետ (ե՞րբ, մինչև ե՞րբ)
Մրցույթի հայտարարության հրապարակում	ՀՄԱԱ	18.07.2022
Տեղեկատվական հանդիպումներ	ՀՄԱԱ	4 sessions until end of July, one in each marz (Ijevan, Gyumri, Goris, Armavir) and one online. The exact time and place will be announced under www.aasw.org . Prior registration is obligatory.
Դոնորից հստակեցումներ պահանջելու վերջնաժամկետը	Հայտատուներ	05.08.2022
Դոնորի կողմից հստակեցումներ տրամադրելու վերջնաժամկետը	ՀՄԱԱ	19.08.2022
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ	Հայտատուներ	29.08.2022, 15.00 local time
Պայմանագրի շնորհման ծանուցում	ՀՄԱԱ	30.09.2022
Պայմանագրի ստորագրում	ՀՄԱԱ /Հաղթող հայտատու	15.10.2022
Ծրագրի ակնկալվող սկիզբը	Հաղթող հայտատու	16.10.2022

8. Հավելվածների ցանկ

Հավելված A	Ենթադրամաշնորհային ծրագրի հայտ (Word format)
Հավելված B	Բյուջե (Excel format)